Հաստատված է

Կենսաբանության, քիմիայի և

աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի

_նոյեմբերի 24-ի__թիվ 3 նիստում

"_10___"_դեկտեմբերի_2021 թ.

_____

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2021

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում կրթության որակի և ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել և իրականացվում են շարունակական բարեփոխումների համալիր աշխատանքներ, որոնց ակտիվ մասնակցություն է ցուցաբերում նաև կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը: Հավատարիմ լինելով ռազմավարական նպատակների դրույթներին՝ ֆակուլտետը իրականացրել է թե՛ կրթական, թե՛ գիտական և թե՛ միջազգային համագործակցության բնագավառի բոլոր հիմնական աշխատանքները, մասնավորապես՝ բուհի կողմից որդեգրած դասավանդման ժամանակակից ինտերակտիվ մեթոդի կիրառումը, Google Classroom-ի պահանջներին համապատասխան պրեֆեսորադասախոսական անձնակազմի կրթական բոլոր չափանիշների համապատասխանեցումը ներկայացվող պահանջներին, վերոնշյալ աշխատանքների մշտական քննարկումն ու կատարելագործումը ֆակուլտետի նիստերի և սեմինար-քննարկումների ընթացքում: Կատարվել են նաև ուսումնական պլաններն ու կարդացվող դասախոսությունների որակը մշտապես բարելավվելու աշխատաքներ, մանրամասն քննարկման և փորձաքննության են դրվել ժամանակակից պահանջներից ելնելով և միջազգային համագործակցության ծրագրերից բխող նոր ներդրվող առարկաները և ներկայացվել հաշվետվություններ: Ֆակուլտետը նաև իրականացնում է համալսարանական կրթության մասսայականացման և պրոպագանդման առաքելություն, ակտիվ աշխատանքներ է իրականացրել հանրապետության տարբեր մարզերում՝ ներկայացնելով բուհի կրթական ներքին բովանդակությունն ու մասնագիտական առանձնահատկությունները: Ապահովվել են գործընկերային կապեր դպրոցների, բուհերի և ԳԱԱ կազմակերպությունների հետ: Մանսավորապես շարունակաբար գործարկվում է ,,Ավելի մոտ դպրոցին ,, նախագիծը, որի շրջանակներում աշխարհագրության ամբիոնի մասնագռտները դպրոցականների համար կազմակերպում են էքսկուրսիաներ դեպի բնություն , գիտահետազոտական և արդյունաբերական հիմնարկներ: Դպրոցականները մշտապես այցելում են ամբիոնի լաբորատորիա, ուր մասնագետները ներկայացնում են ամբիոնի աշխատանքը, առկա սարքերն ու սարքավորումները:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:
Ֆակուլտետի կառավարման համակարգն ունի կրթական և գիտաուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Ֆակուլտետի կառավարման խորհրդի կազմում ներգրավված են դասախոսներ և ուսանողներ, ովքեր ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ֆակուլտետին և իրենց առնչվող որոշումների կայացմանը: Ֆակուլտետը հաշվետու տարում իր նպատակներին համապատասխան մշակել և իրականացրել է կառավարման պլանավորում, որը իրատեսական է և կարող է ապահովել ֆակուլտետի խնդիրների արդյունավետ լուծում:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Հաշվետու տարում ֆակուլտետը իրականացրել է մասնագիտությունների ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, առանձնացնելով հատկապես այն մոտեցումները, որոնք կնպաստեն ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանը: Ամբիոններում վերլուծվել և մշտապես

մասնագիտական քննարկման առարկա են դարձել դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու մոտեցումները, դրանց պարբերաբար արդիականացման խնդիրները (Ամբիոնների վերանայված ՄԿԾ-ներ):Կատարվել են նաև ուսումնական պլաններն ու կարդացվող դասախոսությունների որակը մշտապես բարելավվելու աշխատաքներ, մանրամասն քննարկման և փորձաքննության են դրվել ժամանակակից պահանջներից ելնելով և միջազգային համագործակցության ծրագրերից բխող առարկաները, ինչպես նաև իրականացվել են ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիտարկում՝ ապահովելով ուսումնական պլանների և հանրակրթական դպրոցների առարկայական համապատասխանելիություն և ներկայացվել հաշվետվություններ: Քննարկվել և բարելավվել են դասախոսությունների փաթեթները, կատարվել են առաջարկներ հետագա բարելավման վերաբերյալ: Մասնավորապես շեշտադրվել է ուսումնական գործընթացի գործնական բաղադրիչը: Մասնավորապես նախատեսվել է լաբորատոր և գործնական աշխատանքների առանձին փաթեթների կազմումն ու ներդրումը: .Առցանց դասախոսությունների և գործնական աշխատանքների իրականացման համար քննարկվել և կիրառվել են նոր գործիքներ, որոնք ապահովում են կրթության արդյունավետությունը: .Ներդրվել են միջանկյալ քննությունների անցկացման նոր թեսթեր և գործնական առաջադրանքներ:Պարբերաբար իրականացվել են դասալսումներ և դրանց հետագա քննարկումներ: Միջազգային գիտական ծրագրերի շրջանակներում շարունակվել է ակտիվ համագործակցությունը: 2021թ.-ին ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմն ակտիվորեն ընդգրկված է եղել ռազմավարական ծրագրի իրականացման գործընթացին, որը ապահովել և մեծապես նպաստել է կրթության որակի բարելավմանը:
Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում ուսանողների գնահատման 100 միավորանոց համակարգը հանդիսանում է ակադեմիական, գիտելիքի ազնվության ապահովող կարևորագույն մեխանիզմ: Ըստ գնահատման մեթոդների ու չափորոշիչների վերանայվել են նաև առարկայական նկարագրերը կապված գնահատման նոր համակարգի և ուսուցման էլեկտրոնային հարթակի կիրառման հետ: Վերլուծվել է սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունները, ուսումնառողների գնահատման մոտեցումների վերանայումները և ուսանողների գնահատման ու գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը:
Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:
Ֆակուլտետու աշխատանքները նպատակաուղղվել են մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու, ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ: Ֆակուլտետի երեք բաժիններում գործող բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը ժամանակակից միջազգային չափորոշիչներին համապատասխան վերանայվել, մասնակիորեն փոփոխվել և որակապես բարեկարգվել են: Մասնավորապես, եվրոպական կրթական ծրագրերի պահանջներից ելնելով՝ իրականացվել են բակալավրի և մագիստրոսի մասնագիտական կրթական ծրագրերում միջգիտակարգային կապերի ներդրման աշխատանքներ: ԿՔԱ ֆակուլտետում շարունակվում են իրականացվել միջազգային ծրագրեր, որոնք նպաստում են ուսումնական պլաններում առարկայական ծրագրերի ներդրմանը, ինչպես նաև ուսանողների շարժունակության ակտիվացմանը /ուսանողների, ասպիրանտների և դասախոսների/ տարբեր ժամանակահատվածներով վերապատրաստման և որակի բարձրացման նպատակով:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:

Բակալավրի	առկա	128
	հեռակա	142
Մագիստրոսի	առկա	43
	հեռակա	6

Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Ուսանողների արտահոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	_		
2	_		
3	_		
4	_		
5	_		
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	_		
2	_		
3	_		
4	_		
5	_		
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	6	19
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	2	8

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը: (Ֆակուլտետում ուսանողների հավաքագրման մեխանիզմները բազմաբնույթ են: Մասնավորապես դրանք դրսևորվում են քարոզարշավների, Երևանի և մարզերի տարբեր դպրոցների հետ համագործակցության, աշակերտների հյուրընկալության, բաց դռների կազմակերպմամբ և այլ միջոցառումներով:
Ֆակուլտետում ընդունելության շարժընթացը համարում ենք բավարար, ինչը և արտահայտում է հավաքագրման վեոհիշյալ մեխանիզմների արդյունավետությունը: Կարծում ենք, որ դիմորդների հավաքագրման գործընթացում խիստ կարևոր նշանակություն կարող է ունենալ ֆակուլտետում ուսումնական դաշտային պրակտիկաների վերականգնումը:
Ուսանողների հավաքագրման իրականացման կարևոր միջոցառումներ ենք համարում միջնակարգ հանրակրթական հաստատությունների հետ տարվող հետևյալ աշխատանքները.

«ԱՎԵԼԻ ՄՈՏ ԴՊՐՈՑԻՆ» նախագիծը կյանքի է կոչվել շուրջ մեկ ամիս առաջ՝ 2021թվականի հոկտեմբերի մեկից:-Նախագիծն ունի կրթադաստիարակչական նպատակ:

-Կարևոր նպատակներից են նաև՝ Մանկավարժական բուհ-դպրոց/ կամ կրթական այլ հաստատություն/ -դասախոս-ուսուցիչ-ուսանող-աշակերտ-ծնող կապերի հաստատում, ամրապնդում, գործնական,կիրառական աշխատանքների,մասնավորապես՝ էքսկուրսիոն տուրերի, արշավների, բնության գրկում դասերի մոդելների մշակում, իրականացում և մասսայականացում :Նախագիծը հնարավորություն է տալիս ՀՀ տարբեր կրթական հաստատություններին ավելի հստակ ծանոթացնել մեր բուհի ունեցած հնարավորություններին և ներուժին:

-Սույն նախագիծը նաև լավ հնարավորություն է՝ բացահայտել մեր բուհի ուսանողների կրթական ներուժը, օգտագործել բուհի ռեսուրսներն՝ ի նպաստ նոր գաղափարների և դրանց իրականացման, բարձրացնել բուհի հեղինակությունը:

Այսպիսով՝ հոկտեմբերի մեկից մինչ նոյեմբերի մեկն ընկած ժամանակահատվածում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները, հետևյալ կրթական հաստատությունների հետ:

1. Էքսկուրսիա Երևան-Էջմիածին /Մաչանենց տուն/-Երևան-Գլոբալ Բրիջ կրթահամալիր

2. Երևան-Արագածոտն գյուղ-Երևան- Գլոբալ Բրիջ կրթահամալիր

3. Երևան-Զանգակատուն-Խոր Վիրապ –Երևան- Գլոբալ Բրիջ կրթահամալիր

4. Երևան-Աշտարակ /Կարմրավոր,Գուրմե Դուրմե շոկոլադե տուն/-Երևան- դաս բնության գրկում/ -ԵրևանիՌոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց

5. Երևան-Օհանավան/Քասախի հովիտ, Հովհաննավանք/ -Մուղնի-Երևան- դաս բնության գրկում/ -ԵրևանիՌոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց

6. Երևան-Արարատի մարզ-Վայոց ձոր/ Եղեգիսի հովիտ,Գողթանիկի ջրվեժ-Արենի քարանձավ-Գնիշիկի հովիտ-Նորավանք/-դաս բնության գրկում - Երևան- Գլոբալ Բրիջ կրթահամալիր

7. Երևան-Արագածոտն /Օշական/- դաս բնության գրկում - Երևան- Գլոբալ Բրիջ կրթահամալիր

8. Երևան-Արագածոտն/Սաղմոսավանք, Տառերի պուրակ/- ,,Ա ,, տառի տոն և դաս բնության գրկում-ԵրևանիՆ.Վ.Գոգոլի անվան թիվ 35 հիմնական դպրոց

9. Երևան-Արարատի մարզ /Խոր Վիրապ վանական համալիր և Խոր Վիրապ բնական արգելավայր- -դաս բնության

գրկում/ -Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց-նկարահանում ՝ ,,Հաջողության բանաձև,, /երկու դասարան/

10. Երևան-Արարատի մարզ /Խոր Վիրապ վանական համալիր և Խոր Վիրապ բնական արգելավայր-դաս բնության գրկում/ -Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց

11. Երևան-Աշտարակ/ Կարմրավոր,Սպիտակավոր,Ծիրանավոր,Պ.Պռոշյանի տուն թանգարան, Գուրմե Դուրմեշոկոլադի տուն/ -դաս բնության գրկում-Երևանի Հրանտ Դինքի անվան թիվ 44 հիմնական դպրոց

12. Երևան-Կոտայքի մարզ /ՀՀ ԱԻՆ ծառայության Գառնու սեյսմիկ դիտարան, Գառնի քարերի սիմֆոնիա բնությանհուշարձան/-դաս բնության գրկում- Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց:

13. Երևան –ՀՊՄՀ-ԿՔԱ ֆակուլտետ/ մասնագիտական կողմնորոշման գործնական դասեր լաբորատորիաներում/ -Երևանի Ռոբերտ Աբաջյանի անվան թիվ 147 հիմնական դպրոց:

Այս ընթացքում կոնկրետ նոր համագործակցության առաջարկներ ենք ստացել ՀՀ մարզերի մի շարք կրթական հաստատություններից/օրինակ՝ Վարդենիսի թիվ 3 քոլեջից.Արարատի մարզի մի քանի հիմնական դպրոցներից, Երևանի Նիկոլ Աղբալյանի անվան դպրոցից, ՀՀ ում գործող Քեմբիրիջի համալսարանի քոլեջից և իհարկե շարունակելու ենք ակտիվ համագործակցել վերը նշված կրթական հաստատությունների հետ,մշակելով և իրականացնելով նոր երթուղիներ, դասերի և միջոցառումների նոր ձևաչափեր:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:
Հեռացումների հիմնական պատճառ են հանդիսացել ուսման վարձի պարտքը և անբավարար առաջադիմությունը:Վերականգնման պատճառը տարկետման ժամկետների ավարտն է:

Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:	
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:	
Բակալավր	1
Մագիստրոս	2
Ընդհանուր	3
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը	
Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ

1	Էրազմուս Լեռնային բնակավայրերի կայուն զարգացման հիմնախնդիրները կովկասյան տարածաշրջանում	2 1
2		
3		
4		
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	The geopolotikal significance of the Nev Silk Road for Armenia	1
2	ՀՀ ՋՐԷԿ-ների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա	1
3	Ռուբեն Օրբելու ջրահնագիտական ներդրումները պատմա-աշխարհագրական գիտության զարգացման գործում:	1
4	Малоазиатский тритон *Ommatotriton ophryticus* в Армении – разведение и развитие в неволе, выпуск молодняка в ненарушенные естественные места обитания	1

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Ֆակուլտետն ունի բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմ, որի մասնագիտական և կրթական որակների կատարելագործումը հանդիսանում է ֆակուլտետի մշտական վերահսկողության առարկան: Ֆակուլտետի մասնագիտական որակների կատարելագործման ակնկալիքով հրավիրվում են և մասնագիտական դասընթացներ են վարում հանրապետության այլ բուհերի որակյալ մասնագետներ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը շարունակում է ակտիվ մասնակցել մասնագիտական կրթական ծրագրերի, առարկայական ծրագրերի նկարագրերի, ուսումնամեթոդական փաթեթների բարելավման աշխատանքներին: Ֆակուլտետի նիստերի ժամանակ պարբերաբար ներկայացվում են ամբիոնների դասախոսների առաջավոր փորձը՝ կապված կրթական նոր տեխնոլոգիաների, դասավանդման նոր ինտերակտիվ մեթոդների, էլեկտրոնային ուսուցման դասընթացների կազմման և կիրառման հետ: Դասախոսներն պարբերաբար օգտագործում են Google էլեկտրոնային հարթակի գործիքները՝ էլեկտրոնային ուսուցումն ավելի համակարգված և արդյունավետ իրականացնելու նպատակով: Ֆակուլտետում պարբերաբար անցկացվող գիտամանկավարժական մշտադիտարկումների արդյունքում կարելի է փաստել, որ ֆակուլտետում դասավանդող պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական որակները լիովին համապատասխանում են մասնագիտական կրթական ծրագրերի նպատակների արդյունավետ իրականացման գործընթացին: Հաշվետու տարում ֆակուլտետը շարունակական աշխատանք է տարել դասախոսների մասնագիտական որակների և նրանց աշխատանքնի գնահատման ուղղությամբ: Դասախոսական աշխատանքների ժամանակի պահանջներին համահունչ արդյունավետությունը գնահատելու համար համապատասխան գրաֆիկով անցկացվել են փոխդասալսումներ, դասախոսների և ուսանողների միջև հանդիպումներ, գիտական նորույթների վերաբերյալ քննարկումներ, ուսանողների կողմից դասավանդվող առարկաների մասնագիտական որակի գնահատում:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:			
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Հաշվետու տարում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների շրջանակները արդիական են, համահունչ են և համապատասխանում են միջազգային գիտական այն ծրագրերի պահանջներին, որոնց մասնակցում են ֆակուլտետի ամբիոնները: Հիմնական հետազոտությունների և հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է գիտական և մանկավարժական բլոկները: Գիտահետազոտական հետաքրքրությունները ընդգրկում է Լեռնային երկրների կայուն զարգացման և կայուն կառավարման, կայուն տուրիզմի զարգացման, տարածքների նպատակայիան օգտագործման և լանդշաֆտային պլանավորման, ՀՀ կենսաբազմազանության, ագրոկենսաբազմազանության պահպանման բնագավառները: Վերջիններս հանդիսանում են լեռնային երկրների ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, տարածքային կայուն պլանավորման՝ որպես երկրի ռազմավարական գերակա ուղղություններով պայմանավորված բնագավառներ:			
Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:			
ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Всероссийском педагогическом издании «Учительский журнал» свидетельство о регистратии СМИ Эл № ФСТ-42343	-	1
2	Научная конференция. Республика Киргизстан Бишкек,	-	1
3	Материалы VIII Всероссийской конференции с международным участием, посвященной Году науки и технологий в Российской Федерации. Нальчик, 21-25	-	1
4	III международный конгресс «Наука, питание и здоровье»,	-	1
5			
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Ankara Universitesi Cevrebilimleri	-	1

	Dergisi 8(1),		
2	Austrian Journal of Technical and Natural Sciences, Premier Publishing s.r.o. Vienna. №3-4,	-	1
3			
4			
5			
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	Ծիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան	-	1
2	«Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» միջազգային գիտաժողով	-	1
3	ՀՊՄՀ գիտական տեղեկագիր	-	3
4	Հանրապետական գիտական նստաշրջաններևրի նյութեր	-	5
5	Մենագրություններ		4

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում:

Հաշվետու տարում ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացմանն ուղղված աշխատանքների մասին են վկայում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությունը միջազգային գիտաժողովներին և գիտական հոդվածների հրապարակումները արտասահմանյան պարբերականներում:

Միջազգային գիտական ծրագրերի շրջանակներում շարունակվել է ակտիվ համագործակցությունը (Ավստրիայի Կրեմսի համալսարան, Ծվեյցարիայի Բեռնի համալսարան, Թբիլիսի պետական համալսարան) եռակողմ երկրների միջև: Մասնավորապես ամռանը իրականացվել է խոշոր միջազգային ֆորում, դաշտային հետազոտական աշխատանքների մասնակցությամբ, որին վերոնշյալ երկրներից մասնկցում էին բազմաթիվ ներկայացուցիչներ: Վերջինս առանձնահատուկ էր նրանով, որ առաջին անգամ հետազոտությունները կրում էին տրանսդիսցիպլինար բնույթ, որը հնարավորություն տվեց հետազոտությունները իրականացնել տարբեր մասնագիտությունների /պատմաբաններ, էկոլոգներ, կենսաբաններ և այլն/, համատեղ հետազոտական մեթոդների կիրառմամբ, որը բարձր գնահատվեց և միջազգաին և թե տեղական փորձագետների կողմից:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Ֆակուլտետի աշխատակիցների հետազոտական գործունեությունն և ուսումնական գործընթացը գտնվում են սերտ փոխկապակցվածության մեջ: Մասնավորապես, ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական հետազոտությունների արդյունքները ուղղակիորեն արտացոլվել են վերանայված ուսումնական ծրագրերում, հաշվի են առնվել ուսումնական պլանների առարկայական ցանկի մշակման և բարեկարգման աշխատանքներում: Այդ մասին է վկայում նաև ուսանողների ներգրավվածությունը ֆակուլտետի գիտական աշխատանքներում: Միջազգային ծրագրերը անմիջականորեն մեկ տարվա կտրվածքով

հետազոտական աշխատանքների ներքին բովանդակությամբ լիարժեքորեն զուգակցված են ուսումնական գործընթացներին /հետազոտության թեմատիկային համապատասխան/:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
Ֆակուլտետը ունենալով որոշակի նյութատեխնիկական բազա, ընդհանուր առմամբ, բավարարված չէ եղած հնարավորություններով: Մասնավորապես մանկավարժական պրակտիկաների առկայության կողքին լուրջ խնդիր է մասնագիտական ուսումնական պրակտիկաների խիստ անբավարար լինելը, որը չի կարող չանդրադառնալ որակյալ ուսուցիչ և մասնագետ պատրաստելու գործում: Ֆակուլտետում առկա է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, մասնավորապես ուսուցման տեխնիկական միջոցներով համալրված լսարաններ, գիտաուսումնական լաբորատորիաներ, ուսումնական կաբինետներ, որոնց նյութական կահավորվածության աստիճանը բավարարում է որակյալ կրթության ապահովման պահանջներին:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Ֆակուլտետը մշտապես հետևել և մասնակիցն է եղել ոչ միայն բուհում, այլ նաև հանրապետությունում տեղի ունեցող քաղաքացիական, հասարակական, մշակութային ոլորտների զարգացումներին: Ֆակուլտետը սերտ կապերի մեջ է ՀՀ տարբեր մարզերում աշխատող շրջանավարտների հետ էապես նպատելով նրանց ակտիվ մասնակցությանը կրթության որակի և բարելավման գործում: Պետք է նշել նաև, որ ԱԴՄ ամբիոնում գործում է <<Հայ-աշխարհագետ>> հասարակական կազմակերպությունը, իսկ սոցցանցերում ակտիվ ձևով գործում են աշխարհագետների տարբեր մեթոդմիավորումներ:Ֆակուլտետը սերտ կապեր է ձևավորել նաև հանրապետության մարզերի և մայրաքաղաքի մի շարք միջնակարգ ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների հետ:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:

ԿՔԱ ֆակուլտետում շարունակվում են իրականացվել միջազգային ծրագրեր, որոնք նպաստում են ուսումնական պլաններում, միջազգային ճանաչում ունեցող, առարկայական ծրագրերի ներդրմանը, ինչպես նաև ուսանողների շարժունակության ակտիվացմանը /ուսանողների, ասպիրանտների և դասախոսների/ տարբեր ժամանակահատվածներով վերապատրաստման և որակի բարձրացման նպատակով:

Միջազգային ծրագրերը անմիջականորեն մեկ տարվա կտրվածքով հետազոտական աշխատանքների ներքին բովանդակությամբ լիարժեքորեն զուգակցված են ուսումնական գործընթացներին /հետազոտության թեմատիկային համապատասխան/:

Ֆակուլտետի միջազգայնացման աշխատանքները հիմնականում նպատակաուղղված են լեռնային երկրների կայունացարգացման և ռեսուրսների կառավարման, կենսաբանության և կենսաբազմազանության համատեղ ուսումնասիրություններին: Այդ ուղղությամբ գիտական հոդվածքներ են հրատարակվել եվրոպական գիտական ամսագրերում և թեզիսներում:

ԿՔԱ ֆակուլտետը համագործակցում է Ավստրիայի Կրեմսի համալսարան, Շվեյցարիայի Բեռնի համալսարան, Թբիլիսի պետական համալսարանի, կենսաբանության ուղղությամբ համագործակցում է տեղական գիտահետազոտական հաստատությունների (ՀՀԳԱԱ բուսաբանության և կենդանաբանության ինստիտուտներ) բուհերի և նախարարությունների հետ: Նախատեսում է միջազգային լայն կապեր հաստատել կլիմայի գլոբալ փոփոխության և կենսաբազմազանության հիմնախնդիրների շուրջ համագործակցելու և համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

- Միջազգային ծրագրի արդյունքում Անդրգիտակարգային դաշտային իրավահճակային ուսումնասիրությունների մշակման և իրականացման դասընթաց Ձեռնարկ համալսարանական ուսումնառողների համար:
- Էրազմուս + ծրագրի շրջանականում վերապատրաստման դասընթաց Վիեննայի Բոկուի համալսարանում 19.06.2021-29.06.2021
- Եռամսյա դասխոսների վերապատրաստում - Դասընթացն իրականացվել է ՀԿ-ի «Փոփոխության դերակատարները. ուսանողական ակտիվիզմի խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը համաֆինանսավորվում է Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի և Սլովակիայի կառավարությունների կողմից Վիշեգրադ միջազգային հիմնադրամի միջոցով:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքների մասին են վկայում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությունը միջազգային գիտաժողովներին և գիտական հոդվածների հրապարակումները արտասահմանյան պարբերականներում:

ֆակուլտետը համագործակցության ակտիվ գործընթաց է սկսել և նախատեսում է.

1. Ռուսաստանի Դաշնության ԳԱԱ Պապանինի անվան ստորգետնյա ջրերի կենսաբանության ինստիտուտի հետ,
2. Ռուսաստանի Դաշնության Դարվինի պետական բնական կենսոլորտային արգելոցի հետ,
3. Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի կազմում գործող աշխարհագրության ֆակուլտետի և կենսաբանության և քիմիայի ինստիտուտի հետ,
4. Վրաստանի հանրապետության Իլյայի համալսարանի հետ,
5. Շվեյցարիայի JURASSICA Museum գիտական հաստատության հետ,
6. Բելոռուսի հանրապետության Մ. Տանկի անվան մանկավարժական համալսարանի հետ,
7. Մասնակցային հայտ է ներկայացվել APPEAR 3 միջազգային ծրագրին՝ հետևյալ թեմատիկայով՝ Cross Continental University Partnership on Inclusive Regional Development in Conflict-Peace Context (Միջտարածաշրջանային համալսարանա-կան համագործակցություն

ռեգիոնալ զարգացման նպատա-կով/ կոնֆլիկտ-խաղաղություն համատեքստում):

8. Ծրագիր « Հետազոտություն և գործողության իրականացում» խաղաղարար միջնորդություն համալսարանների գիտական համագործակցության միջոցով (Թբիլիսի-Սուխումի - Բաթումի-Երևան-Բեռն),

9. Ծրագիր «Կլիմայի փոփոխություններին հարմարվողականության կարողու-թյուն-ների հզորացումը Հարավային Կովկասում»: Հեռավար ուսուցման դասընթաց «Էկոհամակարգային ծառա-յությունների և աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) հիմնախնդիր-ների ինտեգրում վտանգի գնահատում և աղետների ռիսկի կառավարում Հարավային Կովկասում» (Ծվեյցարյայի համադաշնություն, Կայուն Կովկաս (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:
ԿՔԱ ֆակուլտետը միշտ էլ բարեխղճորեն, կազմակերպված և պատշաճ ձևով կատարել է ուսուցման որակի բարձրացման իր առջև դրված խնդիրները, դրա մասին են վկայում ֆակուլտետում պարբերաբար իրականացվող մշտադիտարկումները: Ֆակուլտետի կողմից իրականացվում են ՄԿԾ-ների ներքին բովանդակության և իրականացման մեխանիզմների մշտադիտարկում՝ ապահովելով ֆակուլտետի ուսումնական պլանների և հանրակրթական դպրոցների առարկայական համապատասխանելիություն: Իրականացվում է մասնագիտությունների ՄԿԾ-ների ուսումնառության արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, առանձնացնելով հատկապես այն մոտեցումները, որոնք կնպաստեն ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանը: Մշտապես մասնագիտական քննարկման առարկա են դարձել դասավանդման և ուսումնառության մեթոդներն ու մոտեցումները, դրանց պարբերաբար արդիականացման խնդիրները: 1. Ապահովվել են համալսարանի կայքէջում և սոցիալական հարթակներում վարվող մասնագիտացված խմբերում ամբիոնին վերաբրող կարևոր նյութերի հրատարակումները: 2. Ապահովվել են գործընկերային կապեր դպրոցների, բուհերի և ԳԱԱ կազմակերպությունների հետ: Մանսավորապես շարունակաբար գործարկվում է ,,Ավելի մոտ դպրոցին ,, նախագիծը, որի շրջանակներում աշխարհագրության ամբիոնի մասնագռտները դպրոցականների համար կազմակերպում են էքսկուրսիաներ դեպի բնություն , գիտահետազոտական և արդյունաբերական հիմնարկներ: Դպրոցականները մշտապես այցելում են ամբիոնի լաբորատորիա, ուր մասնագետները ներկայացնում են ամբիոնի աշխատանքը, առկա սարքերն ու սարքավորումները: 3. Քննարկվել և բարելավվել են դասախոսությունների փաթեթները, կատարվել են առաջարկներ հետագա բարելավման վերաբերյալ: Մասնավորապես շեշտադրվել է ուսումնական գործընթացի գործնական բաղադրիչը: Մասնավորապես նախատեսվել է լաբորատոր և գործնական աշխատանքների առանձին փաթեթների կազմումն ու ներդրումը: 4. Ընդունվել է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կառուցվածքային փոփոխությունը շեշտադրելով դրանց գործնական և կիրառական նշանակությունը: 5.Առցանց դասախոսությունների և գործնական աշխատանքների իրականացման համար քննարկվել և կիրառվել են նոր գործիքներ, որոնք ապահովում են աշխարհագրական կրթության

արդյունավետությունը: Մանսավորապես խոսքը վերաբերում է էլեկտրոնային քարտեզների և ուրվագծային քարտեզների հետ աշխատանքին: 6.Ներդրվել են միջանկյալ քննությունների անցկացման նոր թեսթեր և գործնական առաջադրանքներ: 7.Պարբերաբար իրականացվել են դասալսումներ և դրանց հետագա քննարկումներ: 8.Ամբիոնում քննարկվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետազոտական աշխատանքներն ու կոնֆերանսներին ներկայացված նյութերը: 9. Ամփոփվել է ամբիոնի տարեկան աշխատանքը և swot վերլուծության տեսքով, որի հիման վար նախանշվել են հետագա անելիքները:
Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:
Դատելով ֆակուլտետում որակի ապահովման գործընթացին ներքին շահակիցների ակտիվ մասնակցությունից կարելի է եզրակացնել, որ նրանց ներգրավվածության աստիճանն առայժմ ավելի բարձր է համեմատած արտաքին շահակիցներից: Որակի ապահովմանը մասնակցում են ոչ միայն պրոֆեսորադասախոսական անձնակազմն ու ուսանողները, այլև հանրակրթական դպրոցի ներկայացուցիչները: Ֆակուլտետը աշխատանք է տանում արտաքին շահակիցների ներգրավվածությունը բարձրացնելու ուղղությամբ: